



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7
Հեռ. /0264/2-10-45, Ֆաքս /0264/2-41-75
Կայք gegharkunik.mtaes.am
Էլ. փոստ gegharkunik@mta.gov.am
N _____

-----2016թ.

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ ԴԱՎԻԹ ԼՈՔՅԱՆԻՆ
/Զեր՝ 12.07.2016թ. N 01/14.2/2534-16/

Հարգելի՛ պարոն Լորյան,

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարին հասցեագրված <<Ինֆորմացիայի ազատության կենտրոն>> հասարակական կազմակերպության նախագահի կողմից 07.07.2016թ. N 287-9 գրությամբ պահանջված տեղեկատվության վերաբերյալ հայտնում եմ, որ.

1. 2016թ. հունիսի 30-ի դրությամբ Գավառի համայնքապետարանը մասամբ է հազեցած համապատասխան տեխնիկասարքավորումներով՝ ավագանու նիստերը, հանրային քննարկումները և ՏԻՄ ասուլիսները առցանց հեռարձակելու համար:

«Աջակցություն Հայաստանում տեղական ժողովրդավարության ամրապնդմանը» ծրագրի շրջանակներում 2016թ. հուլիսի 6-ին Սևանի համայնքապետարանի և Եվրոպայի խորհրդի Հայաստանյան գրասենյակի միջև կնքվել է պայմանագիր համապատասխան տեխնիկայի տրամադրման համար՝ համայնքի ավագանու նիստերի առցանց հեռարձակումը ապահովելու նպատակով:

Համաձայն այդ պայմանագրի՝ Սևանի համայնքապետարանին արդեն հատկացվել են 37780 ՀՀ դրամ արժողությամբ տեխնիկական միջոցներ:

2. Գավառի համայնքապետարանի համար ձեռք են բերվել տեխնիկասարքավորումների մի մասը՝ 37780 ՀՀ դրամ արժողությամբ:

Ըստ նախնական պայմանավորվածության՝ առցանց նիստերի հեռարձակման համար ԵԽ-ի կողմից Սևանի համայնքապետարանին կտրամադրվի բարձրախոս, մեկ տեսախցիկ, եռոտանի տեսախցիկ տեղադրման համար, համակարգիչ:

3. Գավառի համայնքապետարանը 2016թ. հունիսի 30-ի դրությամբ ունի համայնքային կայք www.gavariqaxaqapetaran.am, որը վերազինման փուլում է:

Սևանի համայնքապետարանն ունի պաշտոնական կայք էջ sevancity.am, որը գործում է 2010թ-ից, պատրաստվել է «ՏՀԶՎԿ» ՀԿ-ի կողմից: Պաշտոնական կայք էջի վարման կարգը ընդունվել է համայնքի ղեկավարի՝ 15.04.2015թ. 116-Ա որոշմամբ:

4. Գավառի համայնքապետարանի համապատասխան աշխատակիցների համար դասընթացներ չեն կազմակերպվել:

Սևանի համայնքապետարանի պաշտոնական կայք էջը վարելու համար 2007-2015 թվականներին վերապատրաստում են անցել թվով 9 աշխատակիցներ:

5. 2016թ. հունիսի 30-ի դրությամբ ավագանու նիստերի և ՏԻՄ ասուլիսների առցանց հեռարձակում չեն ապահովվել:

6. Պարտավորության լիարժեք իրականացմանը խոչընդոտող խնդիրները կարճ ժամանակում կհարթեցվեն:

Միաժամանակ, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարին հասցեագրված «Հինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահի կողմից 07.07.2016թ. N 288-1 գրությամբ պահանջված տեղեկատվության վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ Գեղարքունիքի մարզի միայն Վարսերի համայնքապետարանում է նախատեսվել ներդնել «Համայնքային միկրոհարցում» ծրագիրը, սակայն 2016թ. հունիսի 30-ի դրությամբ հարցումներ չեն իրականացվել:

Հարգանքով՝

 ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՏԻ և ՀԳՄՀ վարչություն
Կատարող՝ Մ. Քոլոզյան
Հեռախոս՝ 0264-2-23-32